

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՅՍԱՆ

Ղր. 45
ՍԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25
—
ԲԱԺՆԵ ԳԻՆԸ
ԿԱՆԻԿ Է

Յր. 15
ՍԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8
—
ԿՈՎԿԱՍ
ՅՆՆԵՆԵ ԲՈՂ. 6

ՓԻԻՆԻԿ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱՐԱԹ 15 ՓԵՏՐՈՒԱՐ 1902

Թիի 39

ԿՈԶ

ՏԻԿԻՆ Ի.ԶԷ ՖՐԱՔԱՆ, գերման գրա-
կանութեան աշխարհին մէջ ծանօթ իր ազա-
տանունը գրուածներով, ու աշխատակից *Deu-
tsche Rundschau* ամսագրին, խմբագրութեան
ընդ ղրկած է հետեւեալ կոչը, գերման գրա-
գէտներուն ու հրատարակագիրներուն ուղ-
ղուած:

ԴՐՕՇԱԿ եւ կ'արագրենք սոյն կոչի
բարգմանութիւնը, արեւմտեան հայերէնով.

«Այն ասեմ, երբ Պօլեմերուն հերո-
սական ու օրհասական կոչիւր խորա-
պէս կը ցնցէ, կը յուզէ գերմանական
արտերն ու Գերմանացիներուն արդարու-
թեան զգացումը - սարաբախտ Հայաս-
տանը կ'արիւնոսի աշխարհիս ամենա-
պժգալի բռնապետութեան նանկերուն
մէջ - ու Գերմանիոյ կամ Աւստրիոյ մէջ
ձայն մը չի' բարձրանար, սոսկ մարդ-
կայնութեան, արդարութեան հիշ մը՝
« բռնի' զէնքերնին առնուած » ու յետոյ
խողխողուած հայ ժողովուրդին օգտին
համար:

« Եւ սակայն մեր պարսֆն է, մե'ր,
գերման գրագէտներու մարդկային
պարսկանութիւնն է՝ շարունակ յի-

ւեցնել թէ՛ Հայոց Հարցը Պերլինի
Դաւեազարով մտած է միջազգային իրա-
տունքին մէջ եւ թէ՛ Հայաստանն երո-
պական սէրութիւններէն հովանաւորու-
թիւն պէտք չէ՛ որ հայցէ, այլ պահանջէ:
Բայց գերմանական մամուլը հեղգ է
այդ խնդրոյն մէջ, եթէ ո'չ բոլորովին
համբ: Մինչդեռ Ֆրանսա, արիւն մի
վեր արդէն՝ Քիառի, Անադոլ Ֆրանսի,
Բրէտանի, Գլէմանսօր, Ժօնէսի, ու Տը
Ռօպերթի խմբագրութեան Տակ կը
հրատարակուի « *Pro Armenia* » թերթը,
որուն կոչումն է արդարութիւն ու օգ-
նութիւն աղաղակել, ու փափափողնե-
րուն հաղորդել թէ՛ ո'րպիսի արեան տա-
րերով է գրուած Հայոց Պատմութիւնը
ժողովուրդներու Գրքին մէջ: - Հինգ
արիւններէ ի վեր Ապրիլ-Համիս կը
չարդէ. կը խեղդէ կամ թրակաւ սու-
կալի բաններուն մէջ ու անցանկներով
սպաննել տուած է 300000 Հայ: - Գեր-
մանիոյ մէջ, շատ շատ տեսանք լոյս կարն
ու քիչ տղերէ բողբոջած տղեկու-
թիւններ անվերջանալի շարդերուն վը-
րայ. տղեկութիւններ, առանց սափու-
թեան ու համակրանքի, որոնք ոչինչէն

անելի՛ գէ էն:

«Արգո՛յ ընկերներ ու ընկերուհի-ներ, քօթուե՛նք այդ հեղգութիւնը, գեր-մանական աշխարհին համար ոչ - պաս-ուաբեր: Գիտակցութի՛ւնն ունենանք թէ՛ մենք, գրողներս ենք որ պիտի առաջ սանինք իրաւունքին ու մարդկութեան դասը: Խեղդեցէ՛ք թափովը ձեր ըմբոս-տացման՝ «ասկից Եան չունինք» անար-ժան՝ ձայնը: Յիշեցէ՛ք թէ՛ մեծ սէրու-թիւններն ու ժողովուրդներն իսկ իրենց անեարժութեամբ մեղսակից են այն անուելի գազանութեանց մէջ, որոնք ա-մեն օր կը կասարուին Հայաստանի մէջ: Տեղեկացէ՛ք մարդկային իրաւանց այն բռնաբարումներուն, որոնք անպատիժ կը գործուին հայ ժողովրդին վրայ ու Գերմանիոյ եւ Աւստրիոյ մէջ ալ սկը-սեցէ՛ք ուժգին «քօթական» մը: Մենք պէտք է միջամտութիւն առաջ բերենք: Հնչեցուցէ՛ք միեւնոյն կոչը, որ արդէն կը հնչուի Ֆրանսայի մէջ. (*Pro Armenia!*) Վ.Ա.ՍՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ՛: »

Այսօր քրքուց, ա՛յսօր անկեղծ ու ա՛յսօր յուզիչ էջ մը կ'արժէ կարգալ ու կարդալ եւ չը մոռնալ միեւնոյն ժամանակ թէ՛ զայն արտադրողը՝ ալօր կ'ը երկրին որուն վրայ Վիլհելմի համբաւապատեցան ար-ձուեղօօքը կը ծածանի. . . :

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

Բարից 1, Փետր. 1902,

- Հայերեն նոր թերթ մ'ալ. Հաստատու-գոյն աղբիւրներէ կ'իմանանք որ մեկ երկու շաբաթէն Բարիցի մեջ յոյս պիտի տեսնուի հայերէն նոր հանդէս մ'ալ որ առ այժմ անտօրեայ շինելու է եւ ժամանակէ մը յետոյ 15 օրը անգամ մը պիտի հրատարակուի: Խնդրաւորներն են երկու պարուններ որոնք 15-20 տարիներէ ի վեր հայ արեւմտեան գրական հրատարակիչն վրայ եւ մանաւանդ Կ. Պօլսոյ հայ մամուլին մեջ նախանձեղի դիրք մը գրաւած են: Հանդէսը որ երկուս-նակ 16 էջերէ բաղկացած պիտի լինի, պի-տի պարունակէ միայն գրական նիւթեր,

բայց գրականին բոլոր ձիւղերը: Արդէն թերթին գրեթէ կեսը շարունակ է. անբողջ առաջին թիւը յոյս կը տեսնուի, հաւանաբար, առաջիկայ շաբթու մեջ:

- Բարեկործական Ընկերութեան երեկոյ-քը. - Բարիցի Հայոց Բարեկործական Ընկե-րութիւնը կը պատրաստուի առաջիկայ Մարտ ամսուն մեջ, երեկոյք - պարահանդէս մը տարուի նպատակով Բարիցի եկող-գացող հայ կարօտեալներուն: Կիսանակք թէ՛ արդէն մի քանի բարձր անձնաւորութիւններ իրենց հովանաւորութիւնը խոստացած են այդ ե-րեկոյքին յաջողութեանը համար:

Արդէն յատուկ մասնախումբ մ'ալ կ'ազ-մուած է, հայ եւ ֆրանսացի անձնաւորու-թիւններէ, որը մասնաւորապէս այդ երե-կոյքի կազմակերպութեամբ պիտի զբաղի: Կը՛ւնադրենք որ անցեալ տարուան յաջողու-թիւնն ունենայ այս տարուան երեկոյքն ալ:

- Արձաններու շարք մը. - Բարիցի ֆաղա-քը մեկ քանի ամսուան մեջ պիտի տեսնուի կարգ մը արձաններ որոնք պիտի կանգնուին Ֆրանսայի անկենսապայտու երեք գրողներուն յիշատակը անկենսացնելու համար: Այդ ե-րեք անկենսականներն, որք արդէն իրենց մեռնելէն եւ նոյն իսկ կենդանութեան ժա-մանակին ի վեր անկենսականներ եղած են, հետեւեալներն են Վիլհոլմ Հիլօ, Հոկտօր Պալ-գաֆ, եւ Ալֆրէս քը Միւշու:

Այս երեք յայտնի գրողները միայն ֆր-րանսացի եղած չեն, անոնք բացի ֆրան-սացի շինելի Բարիցիէն եւս եղած են (թէ՛ պէտք ուրիշ տեղ ծնած եւ մեծցած կրնան լի-նիլ, այդ նշանակութիւն չունի), բան մը որ աւելի մեծ յարգ ունի կարգ մը անձե-րու այցիկ:

Բարիցի շինելու կը հասկնան անոնք որոնք Ֆրանսայի մամուլուն մայրաքաղաքին սիրահարուած, անոր մեջ եւ անոր կեան-քով կ'ապրին. այսինքն անոր աշխարհիկ, փողոցային, հրատարակչային, սայրուական, գրական, քաղաքական, գիտական եւ վերջ ի վերջոյ ֆաղափապեական եւ ֆաղափապե կեանքով կը հետաքրքրուին: Որոց այցիկն չի վերիպիր կալաքին անկենսափոք աղբուկը, անկենսապոսի փոփոխութիւնը, մեկ չնչին արկածը կամ դիպումը. . . , անա այս է Բարիցիին, նշանակալիցը:


Հիլօ՛ Բարիցի փողոցներուն վրայ հիացողներէն մին եղած է. անտարեկ միջեւ իրիկուն, կրտսն, Բարիցի փողոց-ները կը չափչփէր, վստակ մը պրծած մէ-

կու մը պիս արագ արագ փայլելով, վազե-
րով. . . : Բարիզի անկենային փողոցնե-
րը, սնցերը, տուները, խանութները գիտե-
ր տեսեր էր, ֆենած էր. . . Երբ ծերացաւ՝
հանրային կառնէրու վերնայարկը իրեն դի-
տարան ընտրած էր, իւր սիրելի Բարիզն ու-
սուովնասիրելու. . . : Եւ անա այսպիս ան
բողոց « Թռուառները », Բարիզի « Նօր-
Տաւր », երկուսն ալ Բարիզի կեանքէն:

Իւր արձակին բացուելը տեղի պիտի ու-
նենայ Փետր. 26 ին: Որովհետեւ Վիկտոր
Հիւիօ ծնած է 1802 Փետր. 26 ին, այս
տարի միեւնոյն քուսակակն Բարիզ եւ ան-
բողոց Թրանսա պիտի տեսնէ մեծ բանաստեղ-
ծին թէ հարիւրամեակը եւ թէ անոր փա-
ռաւոր արձակին բացուելը: Պաշտօնական
տունը տեղի պիտի ունենայ Պանթոն եկեղե-
ցունի մէջ ուր կը գտնուի բանաստեղծին
գերեզմանը. երկու գլխաւոր ճաներ պիտի
խօսուին, մին ֆրանսական կառավարու-
թեան կողմէն եւ միւսը ֆրանսական կա-
նախին կողմէն: Յետոյ երգեցողութիւն,
նուագածուրիւն, արտասանութիւն, ելլն:

Տնօրէն EST-OUEST ի

ՍԵՆՏԻՐ Ս. ԴԱԻԹ ԲԷԿ



Ի Մ Ս Է Ր Ս

Իմ սերս մտնու անուակ մ'է յսակ,
Որ լուս անտուկ կը հոսի մեղմիկ,
Որ չուրերուն մէջ վնիս, անալի,
Երկնից կապոյտը ննջ: Խաղաղիկ:

Սերս միտ պայծառ, միտ ջինջ երկինք մ'է,
Որ կը տարածուի անհուն, անսահման,
Այլ որու վրայ աղտոս կ'ըտնու
Խոլ տեղանկներու սեւ ամպեր չի կան:

Սերս աղօթք մ'է, անկեղծ արտաբուխ,
Սերս օրհնեմք մ'է, սուրբ, ազանց բառի.
Որ հրեցակային երգերու մէջէն
Դէպի պատշաճ էակը թռի:

Իմ սերս՝ մտնու անուակ մ'է յսակ,
Սերս միտ պայծառ միտ ջինջ երկինք մ'է,
Սերս աղօթք մ'է անկեղծ արտաբուխ,
Սերս, ա'խ, ամբողջ կեանքիս հոգի'ն է:

Զէ', պէտ չուի ան, ջերմ համբոյրներու
Նայուածք մը՝ գգուող, բաւէ իր համար
Ու սիրուն, բովիչ, բոյր ծագէ մ'ի գաւ՝
Ոչ մի վայելի սերս չի՝ տեղար:

Եւ թեպէտ ան միտ հասնում մ'է արիս
Երբ որ գրկուած է նայուածքէ ծագէ,
Սակայն եւ, Յիւրոյս վրայ գուրգուրում
Ա'խ այդ հասնումը ա'յնքան անուէ է:


ԱՇՈՒՂ

ԱՐՏԵՄԻՍ

Վերջապէս երեցաւ աղեղնազէնն
Արտէմիս, իջաւ հրապարակ ու փա-
րասեց կարգ մը տարակոյսներ որոնք
սկսած էին տակաւ բարդուիլ իր շուր-
ջը, պահ մը վախ իսկ աղդելով բնա-
լայս չը տեսնելու: Մենք տեսնեմք կար-
գացիմք գուրգուրուով, ո'չ նուագ հա-
մակերելի գտնեմք ու համապատասխան
մեր սպասածին:

Կողոններն ուրեմն ԱՐՏԵՄԻՍԸ,
Հայուհիներուն փարելի ամսօրեայ
հանդէտը, որ Ա. թիւէն իսկ դասելով,
կը յուսանք թէ գտնէ ջերմ ընդունե-
լութիւնն ու փառալերանքը, որուն
ա'յնքան արժանի է այն, որքան վստի
է նպատակը հրատարակութեան. վե-
րականգնէր հայ կիւնը, ընծայել ազգին
օժտուն օրհորդներ, որոնք իրենց միակ
օժիտ ու արդուզարդ ընտրեն արքայութիւնը
համեստութիւնը, ժուրիւնն ու տնտ-
սագիտութիւնը. զարգացած կիւնը, ո-
րոնց միակ մտախպարն ըլլայ ՄԱՅՐՈՒ-
ԹԻԻՆԸ, բառին ամենամտնու ու գո-
րովական իմաստովը:

Մաղթեմք որ ԱՐՏԵՄԻՍԸ. Նոր Դա-
րուն սեմին վրայ կանգուն, ազատ-
թեան դրօշակիր, գաղափարի մարտի-
կներուն արժանանին մէջ յաջողի կատա-
րել իրեն յատուկ դերը, առողջ ու փր-
կարար շունչ մը հոսեցնելով հոգիներ-
ուն մէջ, որոնք դարաւոր գերութեան
մրտ ու թունաբայր մթնոլորտին մէջ
բորբոս կապած են ու սեղանձ. . . :
Յաջողութիւնն է յարատեւութիւն:



Ք Ր ՈՆ Ի Կ

Ա. Զ՞Գ. Ա. Յ Ի Ն

ԳԱՀԻՐԷԻ ՈՐԲՒԽՆԱՄՆԵՐԸ. - Բերկ-
 րութեամբ կիմանանք ամենափայլուն
 յաջողութիւնը գոր ունեցաւ Միացեալ
 Ռեփախմամբերուն տուած ներկայացումք
 Խօշիկական օրէրային մէջ: Այդ յաջո-
 դութիւնը կը պարտինք այն պատուական
 Յանձնախումբին, որուն անդամները չը
 թերացան ի գործ դնելու իրենց բոլոր
 ջանքն ու ազդեցութիւնը, զալու համար
 բոլոր հնարաւոր փայլն ու շեղութիւնը,
 յիշեալ ներկայացման, որուն արդիւնքն
 եղած է առնուազն 250 ոսկի:

Մտանց կը խնդակցինք մենք այս
 գերազանցօրէն գեղեցիկ գործին, նախ
 որովհետեւ հայրենիքի անտեսուելի օրբե-
 րուն գոյութիւնն ու դաստիարակութիւ-
 նը գէթ ժամանակի մը համար ալ երա-
 խաւորուած կ'ըլլայ. երկրորդ, որով-
 հետեւ այս հայրենասիրական ձեռնար-
 կին այսօր փայլուն յաջողութիւն մը
 գտնելը կը նշանակէ թէ՛ Գահիրէի մէջ
 պակաս չեն հայեցի արտեր որ մեր Մեծ
 Աղէտին առջեւ գիտենք բարախել ամե-
 նավաճել գրա ցումներով ու արժանապէս
 ներկայացնել Ազգը միջազգային բարձ-
 րագոյն արջանակներուն մէջ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՅՐԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Հայկական Չարդերը

Շար. թիւ 38 էն

Վայրկեան մ'առաջ, ցանկ մը
 կարդացի ձեզի միւսլիմաններէն ա-
 ւարի տուած գիտերու, ուր ասոնք
 թալլած, սպաննած են բնակիչները.
 հրդեհած են տուները: Այս գիտերէն
 է Բերդակ, որ Մեոյ դաւտին կը պատ-

կանի եւ որ, 1900 ի օգոստոսին այն-
 քան տառապեցաւ: Արդ, այս տարի օ-
 գոստոս 30 թուականով Մեոյ արջա-
 կայէն հասած համակի մը մէջ կը
 կարդամ. «*Բերդակի բոլոր բնակիչնե-
 րէն կ'եղեցին մէջ ու անոնց
 ցոյց տալով քահանայ շեցուն երեք
 սնունդներ, ըսին. ձեր գիտիքն մնա-
 ցածն ալ կ'ապի պիտի տանք: Մաքսա
 փախար գիտացիները, կ'աւելցնէ թղ
 թակիցը, ստորագրեցին ողորդը:*»

1900 Յուլիս 3 ին, իոֆ, Քուրտե-
 րու հրոսախմբեր, 1000 զօրէ բաղկա-
 ցած վաւերու հետ գործելով կը գրա-
 ւեն Տալուրիկի ու Կէլիէ Կուզանի մի-
 ջեւ տարածուած երկիրը. Սպաղանքի
 հետ ամեն հաղորդակցութիւն կը կտրեն,
 եւ օրածագին, ժամը 3 ին ասենները,
 շեփորը կը հնչեցնեն, միւսլիմանները
 կը խուժենանապատեցան ու յանկարծա-
 կիի բերուած բնակիչներուն վրայ: Բը-
 նակիչները շրջուած կը նետուին դա-
 տր կամ եկեղեցին: Բոլոր բռնուածնե-
 րը կ'սպաննուին: Կին, տղայ, ծեր,
 բան մը չը խնայեցին. յափեսակողնե-
 րուն ձեռքն ամեն ողջ ինկող մեռցու-
 ցին: «*Կիները, կ'ըսէ թղթակից մը,
 մերկացուցին, բռնաբարեցին ու սպան-
 նեցին: Որքուն տարու աշտուր 8 Պե-
 տրու քահանային մօրմբը փետեցին
 ու անոր թերեհն երկու կողմերը կա-
 մաց կամաց կտրելով, կզակները ի-
 րարմէ զատեցին հանեցին ու յետոյ
 զանի կտրեցին սպաննեցին:*»

Յարձակող հրոսապետներէն մէկը
 մեծ ոլի ունէր մանաւանդ Սպաղանքի
 գիտապետին դէմ. «*Նաեւ, մեզի կ'ըսէ
 թղթակիցը, փնտել ու զտնէ տուաւ
 անոր կիներ Տիմէն ու տեսնելով որ
 ծոցուր էր, փորը ձեղեղ տուաւ ու
 տղան ողջ ողջ դուրս քաշել հանեղ
 տուաւ. զանի կտր կտր ըրին մօրը
 թերեւուն մէջ ու յետոյ դանակի 50
 հարուաններով մաշրը յօշեցին:*»

(Շարժում)

Այս բանը կ'ըլլար, տարբ, ոչ թէ 1895ին կամ 1896ին, ինչպէս որ թերես փորձուէի կարծելու, չափելով դէպքերուն վիթխարութիւնն ու աղէտներուն մեծութիւնը: Սպասեցէ՛ք, այս չէ ամենը: Շատ մը կից, տղայ, մարդ, սպաննուած էին եկեղեցին ուր իրենք ամբափակուած էին: Միւսի մասները, Քուրս ու զօրք, « *Կը դիզեն եկեղեցիին առջեւ զարիի ու խոտի խորձեր, քարիւղ կը քափեն վրան, դեզերը կայրեն, կրակի կուտան դռուն ու պատերը. մեծ մասը կանչն շանան:* - « *Դիակներն անգամ, կ'աւելցնէ թղթակիցը, չը յարգուեցան, յոշոտեցան. խակ դէռ ողջ մնացողներուն վրայ գործուեցան բռնաբարութիւններ ու անշուր բարբարոսութիւններ:* -

« *Սպաղանքի բնաջնջումեն ետք, կը յարձակին Եղարդի ու Չորեր ի գեղերը, ուր կը գործեն սպաննութիւններ ու քայտններ. կը քայլեն նաեւ Կոզովիս Կիլիս եւ Հոսունիս տներ կը հրդեհեն Խիսանի մէջ: Հիլենի գիւղն ալ յարձակեցան, մարդերը վիրաւորեցին, չորս երեւելիներ կտոր կտոր ըրին գետը նետեցին:* »

Այս ամենը, տարբ, երկու օրուան մէջ: Չեզի կը հարցընեմ. առո՞նք մասնակի ջարդեր կամ ոճիրներ են: Հրասակներուն մեկնելէն ետք, (քանի որ ջարդողներ բառը խիստ խոտը բառ մը կը թուի Տ. Նախարարին, յասկանը շելու համար այս ոճիրներուն հեղինակները,) բնակիչները կը վերադառնան, մեծ փոս մը կը պեղեն ու կը թաղեն փողոցները ցրուած իրենց ազգականներուն ու հայրենակիցներուն դիակները: Բայց չէ մոռցուած 1895 ի բնութիւնը ու ջնջելու համար ջարդին հետքերը, միւսի մասները գետնէն կը հանեն դիակները, զանոնք խարոյկի վրայ անիւն դարձընելու համար: Յետոյ բռնի ստորագրել կուտան Մասին

Առաջնեալ վանքին արքային եւ ուրիշ հարեկած շատ մ'երեւելի Հայերու՝ յայտարարութիւն մը, ըսելով թէ՛ յեղափոխականներ ապաստանած էին Սպաղանք, յարձակած էին զօրքերուն վրայ, որոնք ինքնապաշտպանութեան համար կուտած էին: Տասնըվեց յեղափոխականներ, կ'ըսեն, սպաննուեցան, երեք անմեղ բնակիչներու հետ որոնք անբազուկութեամբ սպաննուած են. . . :

Արտաքին գործերու Տ. Նախարարին կը հարցընեմ անգամ մ'ալ թէ ի՞նչ ալ կարգի արարքներ կարելի՞ է նրկասել մասնակի արարքներ: Ո՛չ, տարբ. 1892 ի ու 1893 ի դէպքերուն կրկնութիւնն է այս: Այն ատեն Երուսաղէմ չիմացաւ, անցած դարձածը միայն քանի մը տարի վերջը իմացաւ, երբ 1896 ի ընդհ. ջարդերովը փորձեցին հայ ազգը վերջացնել. այն ատեն խորունկ ափսոսանքի ու սրտախնայան շարժում մընդվզեցուց ամեն երկիրներու մէջ բոլոր կուսակցութեանց բոլոր մարդիկներուն խիղճը:

Տ. Ռուանէ կ'աւելցնէ.

Բեմի՛ն վրայ կը բերեմ կը հանեմ այս բաները. որովհետեւ, երբեմն, ու Արտ. Գործ. Նախարարը լաւ գիտէ, Մասնավր կը լռէ, հանոյակատար, երբ չէ՛ մեղսակի՛ց. (*շա՛հ շառ, շա՛հ շառ, ծաշազոյն ձախակողմը*)

Խորհրդարանին հաղորդելէ յետոյ շատ մը վկայաթղթեր, Տ. Ռուանէ կը շարունակէ .

Ի՞նչ, անվիճելի է թէ հոն, Մեոյ լեռնադաշտին վրայ, Սասունի ձորերուն մէջ, Չեթունի կիրճերուն մէջ, կա՛յ ժողովուրդ մը որ գիտակցութիւնն ունի իր գոյութեան, ժողովուրդ մը որ կը հոգեւարի, որ մեռնելու մօ՛տ է եւ որ իր օգնութեան կը կանչէ Երուսաղէմ: (*Շա՛հ շառ, շա՛հ շառ, ծաշազոյն ձախակողմը:*)

Հիմայ Արտ. Գործ. Տ. Նախարար .

րը պիտի ձեզի ըսէ թէ՛ Ֆրանսան, Պերլինի դաւենագիրն usուագրողը, այդ ժողովուրդի հանդէպ՝ Եւրոպայի ըսանձնած պարսաւորութեանց լոկ մէկ վեցերորդ կամ եօթներորդ մասին համար պատասխանասու է: Կը կանխեմ իրեն պատասխանելու թէ՛ այդպիսի խնդրոյ մը մէջ ո՛չ միայն իր անցեալովն ու աւանդութիւններովը, այլ եւ իր փառաբանական շահերուն բնութեամբն իսկ, եթէ կրնամ այսպէս ըսել, եզակագորէն դիրքն է Ֆրանսային անմիջապէս միջամտել:

Կա՛ն Եւրոպական ազգեր, որոնց հողային տեղանքները կրնան կասկածելիքնել զիրենց երբ որ ի նպաստ Հայաստանի միջամտեն, բայց Ֆրանսան, ոչ, մի հողային շահ ունի հոն: Մեզի համար Հայաստանի մէջ մէ՛կ շահ միայն կայ, մարդկութեան, փառաբանութեան ու արդարութեան շահը, ինչ որ, ես կ'ըսեմ թէ հոյակապօրէն Ֆրանսական շահ մըն է: (Ծաղիսհարութիւնք ժայռագրոյն ճախակողմը:)

Վերջերս կը կարդայի նամակ մը, դարձեալ Բրո Արմենիայի խմբագիր իմ մեծանուն եղբայրակից Քիլեարի ուղղուած, հայ վարժապետ մը: Անկէ այս ֆանի մը տողերը կը փաղեմ.

«Մենք մեր զաւակներուն Ֆրանսական պատմութիւնը կ'ուսուցանենք: Ֆրանսական յեղափոխութեան շրջանը հասած, երբ իրենց կը պատմենք թո՛ղ որ ինչ որ ըրած են Ֆրանսացիները, մարդը տե՛ր ընելու համար իր իրաւունքներուն ու ճակատագրին ու ժո՛ղովուրդին աչ անկախ, մեր աշակերտները մեզի կը հարցնեն չը հասարակ. Այդ մեր պատմած Ֆրանսան ա՛յ չկայ ուրեմն:»

Տեա՛րք, Ֆրանսային անունը մինչեւ հոն գացած է ազատական ազգի, իրաւունքի պահապանի իր իմաստովը: Կը խնդրեմ Արտ. Գործ. Տ. Նախարար

րէն. թո՛ղ ըսէ մեզի թէ ի՞նչ ըրաւ այս պարագային մէջ, Հայերուն համար, մարդկութեան համար, փառաբանութեան համար, այսինքն, Ֆրանսայի՛ն համար: (Ծաղիսհարութիւնք ժայռագր. ճախակողմը:)

(Շարունակելի)



— ԳԵՐՄԱՆԻԱՆ ՈՒ ՊՍՂՏԱՏԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ. Կ. Պոլսոյ գերմանական դեսպան Մարշալ Վոն Պիրպրոշթայն պատոճը գերման Տեսոնեա Գլխային մէջ, կայսեր տօնին օրը հատ մը խօսեցաւ, խիստ շահեկան: Ակնարկելէ յետոյ անցած տարի Արեւելքի մէջ տեղի ունեցած զանազան դէպքերուն որոնք մասնաւորապէս կը շահագրգռեն Գերմանացիները, դեսպանը Պաղատեսի երկաթուղիին վրայ խօսեցաւ այս կերպով. «Սուրբանն ինձի անձամբ յայտարարեց թէ՛ ինք չի ուզի վստահութեամբ գերման ձեռնարկն յանձնել այս մեծ գործին կատարումը. զի ինք տեսաւ Գերմանացիները գործի վրայ Թուրքիոյ մէջ ու ինք գիտէ թէ ասոնք ինչ կրնան ընել: Ասոր համար է որ առանձնաշնորհումը տուաւ անոնց:»

- ՎԻԼՀԷԼՄ Բ. Բարիզի շատ մը թերթերը կը ծանուցանեն թէ մինչեւ ցարդ խնամով գաղտնի պահած էին կայսեր արտասանած խօսքերը. զօրապետներն ընդունելուն ասեն: Ահա ապի բնագիրը. «Նախանձանքներով քջապատուած ենք մենք: Բոլոր իմ կազմած ծրագիրներս կը հանդիպին խոչնդոսներու որոնց տարի մինչեւ հիմայ համբերութեամբ մը, որ սակայն կ'սկսի հասնիլ: Կ'ուզեմ մինչեւ ժայրը հետապնդել գերման տէրութեան բարգաւա-

նամը եւ իրեն սալ գերակեցնողները գոր-
պիսի ունենայ զտեղեկութիւն մէջ. «Եթէ
մէկը արգելի ըլլայ անոր, մենք պիտի
փաշտենք գերմանացիները, եւ ու դուք:
Այս սուրբ մեզի յաղթութիւն միայն
կուսայ: »

Քիչ մը վերջ իւր լեզուին հետե-
ւաններէն սարսափած, կայսրը զայն
գաղտնի պահել կը պատուիրէ:

ԻՏԱՆԱԿԱՆ ՏՐԻՊՈՒԽՍ. «Լօսէրա
սը Մարիա ծովակալը, Տրիպոլսոյ մէջ
ըրած հետազօտական նամբորդութենէ
մ'եսք, Իսալիոյ ծովային գործերու նա-
խարարութեան ներկայեց իր տեղեկա-
գիրը որուն մէջ, կը դարձնէ անոր
ուշադրութիւնը «Դուճրուֆի ու Պամդ-
աի» նաւահանգիստներուն ռազմագի-
տական մեծ կարեւորութեան վրայ. զո-
րոնք, կարելի պիտի ըլլար, առանց մեծ
ծախսերու, փոխել պատերազմական
նաւահանգիստներու:

- **ՔՕՈՒԷՅԴԻ ԽՆԴԻՐԸ.** Ֆրանսա-
կան առաջնակարգ մարտնասի մը
յանկարծ մեկնելը դէպ ի պարսկային
ծովածոցը շատ մը կասկածներ կը յա-
րուցանէ:


ԿԼՕ թերթը գիտնալ իսկ կը կար-
ծէ թէ ճրանուան դիտարութիւն ունի,
Ռուսիոյ հետ համաձայն, արգիլել
անգլիական թեսարկութիւնը Քօուէյի
վրայ, հետեւաբար ճրանսական հան-
րապետութիւնը թուրքիոյ հետ իր բարե-
կամական յարաբերութիւններն աւելի
ամրացնելու կը հետամտի:

ՏԱՄԱՏ ՄԱՀՄՈՒՏ, վերջերս Կ.
Պոլսոյ բարձրագոյն Դատարանին վրե-
նովը մահուան դատապարտուած ի
բացակայութեան, ազատ կը պարտի Հը-
նովմի մէջ, ուր Իսալական կառավա-
րութիւնը բնաւ մտադրութիւն չի ցու-
ցրներ վրդովելու անոր հանգիստը:

ԷՆԻՍ ԲՍՇԱՆ որ, հակառակ եւ-
րոպական դեսպաններուն պնդումին,
մինչեւ ցարգ Հալէպի կուսակալու-

թիւնը կը վարէ, կ'երեւի թէ նորէն
սկսած է քիստոնեաները կեղեկելու ու
հալածելու իր մոլեռանդ փաղափա-
կութիւնը, եւ իր արարներն այն աստի-
նան գայթակղալից դարձած են որ Կ.
Պոլսոյ դեսպանները պարտաւորուած
են Յունվար 20ին հաւաքական դիմու-
մով մը պատշտանկուամբ պահանջելու
անոր, որուն անունը պատմութեան մէջ
ՀԱՅԱՆՈՇՈՇ ՀՐԷՇ ի սեւ մակդիրովը
պիտի մնայ անջնջելի:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐՈՆ կարգէն է
ԱՆԳԼՕ-ՃԱԲՈՆ համաձայնութիւնը որ
ջերմ ընդունելութիւն գտաւ ո'չ միայն
Մեացեալ-Նահանգներուն կառավա-
րութեան կողմէն, այլ եւ ի Գերմանիա
Իսկ Ռուսիան, որ ամենէն աւելի շա-
հագրագուողն է այս մեծ դէպքով, (որ
ըստ ոմանց, իրեն դէմ ուղղուած փա-
ղափականութեան մ'արդիւնքը կը կար-
ծուէր), ընդհակառակն, իր պատշո-
նական ներկայացուցիչներուն բերնով
համակրութեամբ կ'ողջունէ սոյն հա-
մաձայնութիւնը:



ԱՐՏԷՄԻՍ

ԱՐՏԷՄԻՍ ամսօրեայ հանդէսը կը
հրատարակուի Գահիրէ, 16 երկսիրնակ
մեծագիր էջերով, Տնօրէն-Խմբագրու-
թեամբ ՕՐ. ՄԱՐԻ ՊԷՅԼԷՐԵՍՆԻ, բաժա-
նողագիրը կանխիկ է, Եգիպտոսի հա-
մար տարեկանն է 40 դր. ողջ.
Արտասահմանի համար 12 ճրանգ.

Հասցէն.
Rédaction de la Revue des Femmes
Arméniennes "ARTEMIS"
Poste Restante CAIRE (EGYPTE)

« ԱՐԱՔՍ »

Հայկական տպարանը թէ՛
Հայերէն, թէ՛ գաղղիերէն և
թէ՛ ուրիշ լեզուներով ամեն
տեսակ տպագրական գործեր
կը կատարէ մեծ խնամով եւ,
ինչ որ նուազ կարեւոր չէ,
ԽԻՍՏ ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ:

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԳԻ

Միաց. Նահանգներուն Ուս-
տրը քաղաքէն Հայրենակից մը
մտադիր ըլլալով Հայերէնի
թարգմանել տալ արաբերէն
գիրք մը, կը փնտռէ այդ եր-
կու լեզուներուն հաւասարա-
պէս հմուտ եղող անձ մը, ո-
րուն թարգմանչութիւնը բնա-

կանաբար պիտի վարձատրուի:
Դիմել Փիիւնիկի խմբագ-
րատունը. նամակ ղրկել թեր-
թիս հասցէին՝

S. Burat, Rédaction Punig.
Alexandrie (Egypte)

Գ. ԵՒ Ա. ԹՕԳԱԹԵԱՆ ԵՂԲԱՐՔ

ԿԱՇԵՂԻՆԱՅ ՅԱՐԴԱՐԻԶԲ
Tapissiers et décorateurs

Քաղաքիս երեսլի հայ տուներուն
ծանօք յանախորդ, կը պատրաստեն
գոհացուցիչ պայմաններով ամեն տե-
սակ կահեղէններ, վարագոյր, եւն.
Յանձնարարութի նմամով կը
կատարուին:

Դիմել, Աղղարին, Ռիւէլ-էլ-Չահասի,
Attarine Ruelle-el-Zababy

SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԸՐ

Ապահովագրական Ընկերութիւն
ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Իրամագլուխ 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնը կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս
նաև Մովային, Գետային և Յամաքային փոխադրութեանց արկածներու գէտ.

Իւրամատչելի գներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիսգօր-Փրիսանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱԵԱՆ

Աղեփասնորիս, պզտիկ Մէնչիէ Ապուսուրսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

ԼԱԼԻԱՆՍ

Մովային Ապահովագրական Ըն-
կերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Իրամագլուխ 5,000,000 ֆրանկ